

01/10.1/4068-09

2009-06-18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Տիգրան Արզաքանցյանի` օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

«Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության գործող օրենքով մինչև երեք տարվա վաղեմության ժամկետ ունեցող ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների համար գույքահարկը հաշվարկվում է **100** տոկոսով: Երեք տարվանից ավելի վաղեմության ժամկետ ունեցող ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների համար գույքահարկի գումարը երրորդ տարվան հաջորդող յուրաքանչյուր տարվա համար պակասեցվում է հարկի գումարի **10** տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան հարկի գումարի **50** տոկոսը: Այսինքն, **8** և ավելի տարի վաղեմության ժամկետ ունեցող մեքենաների համար գույքահարկը հաշվարկվում է **50** տոկոսով:

Նախագծով առաջարկվում է երեք տարվանից ավելի վաղեմության ժամկետ ունեցող ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների համար յուրաքանչյուր հաջորդող տարվա գույքահարկի գումարի **10** տոկոսի չափով նվազեցումը թույլատրել կատարել մինչև **12**-րդ տարին՝ մինչև հարկի գումարի **90** տոկոսը, ինչպես նաև գույքահարկ չհաշվարկել և չգանձել **20** տարվանից ավելի վաղեմության ժամկետ ունեցող ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների համար:

Առաջարկություններն ընդունելի չեն հետևյալ նկատառումներով՝

1. Նախագծով առաջարկվող մոտեցումները կհանգեցնեն համայնքների եկամուտների նվազեցմանը և, նկատի ունենալով այն հանգամանքը, որ, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **71**-րդ հոդվածի, «Պետությունն իր ընդունած օրենքներով չի կարող ավելացնել համայնքի պարտադիր լիազորությունները կամ նվազեցնել եկամուտները՝ առանց համապատասխան ֆինանսական փոխհատուցման՝ սույն օրենքի **67**-րդ հոդվածին համապատասխան, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով», նախագծի շրջանակներում պետք է քննարկվի նշված արտոնությունների տրամադրման հետևանքով համայնքների եկամուտների նվազեցումը պետության կողմից փոխհատուցելու հարցը:

2. Ըստ հիմնավորման՝ ներկայացված առաջարկությունները հիմնականում ունեն սոցիալական ուղղվածություն: Սակայն, կարծում ենք, որ փոխադրամիջոցների մասով սոցիալական նկատառումներով նման արտոնությունների տրամադրումը տրամաբանական չէ: Գործնականում, կարծում ենք, որևէ հիմնավորում չունի **12** տարվա արտասահմանյան մեքենաներից, որոնք շուկայում կարող են բավականին բարձր արժեք ունենալ, գույքահարկը **50** տոկոսի փոխարեն **10** տոկոս գանձելը: Առաջարկության ընդունման դեպքում համայնքի անդամների մի մասը կշահի նախատեսվող փոփոխություններից, իսկ համայնքների կողմից համայնքին մատուցվող ծառայությունները կպակասեն:

3. 20 տարվանից ավելի վաղեմության ժամկետ ունեցող փոխադրամիջոցների գույքահարկի վերացումը համայնքների համար հարկային եկամուտների տեսանկյունից անընդունելի է, քանի որ Հայաստանի Հանրապետությունում շահագործվող փոխադրամիջոցների մեծ մասի վաղեմությունը գերազանցում է նշված ժամկետը:

4. «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով գործող մեխանիզմը նպատակաուղղված է նաև հին մեքենաները նորերով փոխարինելուն՝ մինչդեռ առաջարկվող մեխանիզմը չի խրախուսում նշված մոտեցումը:

Նախագծով առաջարկվում է նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ընթացքում զոհված (մահացած), ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած և օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված անձանց (կամ ընտանիքի անդամներին) ազատել գույքահարկի պարտավորություններից՝ նրանց պատկանող մեկ անշարժ և մեկ շարժական գույքի մասով:

Գործող օրենքի համաձայն, եթե Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ընթացքում զոհված (մահացած), ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած և օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված անձն ամուսնացած է եղել, բայց չի ունեցել երեխաներ կամ ամուսնացած չի եղել, ապա իր կամ ամուսնու կամ ծնողների անվամբ սեփականության իրավունքով հաշվառված՝ հարկվող օբյեկտ համարվող գույքն արտոնվում է՝ առանց նշված ժամկետի սահմանափակման: Նշված արտոնությունը ժամկետային սահմանափակում ունի միայն Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ընթացքում զոհված (մահացած), ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած և օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված անձի՝ զավակ (զավակներ) ունեցած լինելու

դեպքում, մինչև զավակներից մեկի 18 տարին լրանալը, ինչն արդեն իսկ ունի սոցիալական բնույթ: Այս առումով առաջարկվող փոփոխությամբ, չնայած վերացվում է ժամկետային սահմանափակումը, սակայն ներացվում է արտոնության շրջանակը՝ այն տարածելով միայն մեկ անշարժ և մեկ շարժական գույքի վրա:

Օրենսդրական տեխնիկայի առումով նախագիծը չի համապատասխանում «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

1. Նախագծի վերնագրում «փոփոխություն» բառն անհրաժեշտ է փոխարինել «փոփոխություններ» բառով,

2. Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներն անհրաժեշտ է միավորել և շարադրել մեկ հոդվածով,

3. 3-րդ հոդվածում «հոդված 15-ի 4-րդ մասի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «15-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի» բառերով, «հանել և այն շարադրել հետևյալ կերպ» բառերը՝ «բառերը փոխարինել» բառերով, և հոդվածը վերջում լրացնել «բառերով» բառով:

Ներկայացված օրենքի նախագծի ընդունման դեպքում զգալիորեն կնվազի համայնքների բյուջեների եկամտային մասը:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն
կատարելու մասին**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության Գույքահարկի Մասին (26 դեկտեմբերի 2002թ. ՀՕ-491-Ն) 7-րդ հոդվածի 4-րդ կետի` «... 50 տոկոսը:» բառերը փոխարինել «...90 տոկոսը:» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքի հոդված 7-ի 5-րդ կետից հանել «Բեռնատար» բառը:

Հոդված 3. Սույն օրենքի հոդված 15-ի 4-րդ մասի «... մինչ այդ անձանց զավակներից մեկի 18 տարին լրանալը» հանել եւ այն շարադրել հետեւյալ կերպ «...մեկ անշարժ եւ մեկ շարժական գույքի մասով»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հիմնավորում

«ՀՀ ԳՈՒՑՔԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿՍՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Սույն օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության համար հիմք ենք համարել այն, որ ներկայիս հարկային քաղաքականությունը` դիցուք ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների սահմանված գույքահարկի դրույքաչափի եւ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների շուկայական արժեքի միջեւ ստեղծում է անհամապատասխանություն` ելնելով վերջիններիս ֆիզիկական մաշվածությունից:

Սույն օրենքի նախագծի հոդված 15-ի 4-րդ մասի փոփոխությունը պայմանավորված է բազմաթիվ քաղաքացիների գրավոր եւ բանավոր դիմումներով, որոնք արդարացիորեն մեկ անգամ եւս փաստում են այն, որ ՀՀ ներկա սոցիալ-տնտեսական վիճակով, բնակչության զբաղվածության աստիճանով եւ աշխատանքային շուկայի որպիսությամբ պայմանավորված ՀՀ քաղաքացիները ի վիճակի չեն իրենց զավակների տասնութ տարին լրանալուց հետո մուծել այդ հարկերը: